ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ (ԸՆԹԱՑԻԿ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՄ – 23/05

ք. Վանաձոր

23 հունվարի 2023թ.

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանի, որը գործում է մարզպետարան կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Գլխավոր կարգադրիչ, մի կողմից, և Ստեփանավանի համայնքապետարանի ի դեմս համայնքապետ Ա.Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Ստացող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Գլխավոր կարգադրիչը հատկացնում է, իսկ Ստացողը ստանում է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2023 թվականին ուսուցման համար ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցները (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման **«Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին»** հոդվածով) ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշման հավելված 5-ի աղյուսակ 9-ով սահմանված ըստ դպրոցների հետևյալ համամասնություններին համապատասխան.

Դպրոցի անվանումը	Սովորողների թիվը	Մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափը (դրամ)	Ընդամենը տարեկան հատկացվող գումարը ըստ եռամսյակներիի (հազ. դրամ)			
			Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Ընդամենը տարեկան
«Ստեփանավանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	14	18157	628.4	1415.4	2516.6	3050.4

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գլխավոր կարգադրիչն իրավունք ունի՝

2.1.1 Իրականացնել վերահսկողություն սուբվենցիայի գումարի նպատակային օգտագործման նկատմամբ:

2.1.2 Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում համայնքի միջոցներից հետ գանձել ոչ նպատակային օգտագործված գումարը և դադարեցնել սուբվենցիայի հետագա հատկացումը:

2.1.3 Պահանջել Ստացողից՝ ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սուբվենցիայի չօգտագործված գումարը:

2.2 Գլխավոր կարգադրիչը պարտավոր է՝

2.2.1 Ստացողին հատկացնել սուբվենցիայի գումարները:

2.3 Ստացողն իրավունք ունի՝

2.3.1 Ստանալ Գլխավոր կարգադրիչի կողմից հատկացվող սուբվենցիայի գումարները:

2.4 Ստացողը պարտավոր է՝

2.4.1 Սուբվենցիայի գումարը օգտագործել նպատակային՝Գլխավոր կարգադրիչին եռամսյակային կտրվածով ներկայացնելով տեղեկատվություն գումարների ծախսման վերաբերյալ:

2.4.2 Ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ստացողը պատասխանատվություն է կրում սուբվենցիայի գումարների նպատակային օգտագործման համար:

3.2 Գլխավոր կարգադրիչը պատասխանատվություն է կրում ըստ Ստացողի կողմից ներկայացված կատարողական ակտերի սուբվենցիայի գումարների համամասնական հատկացման համար:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2023թ. դեկտեմբերի 25-ը

5.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կառավարության որոշումների հիման վրա, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉ	ՍՏԱՑՈՂ
ՀՀ Լոռու մարզպետարան	Ստեփանավանի համայնքապետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք. Ստեփանավան
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06954104
Հ/Հ 900231301012	Հ/Հ 900255101038
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ
Կ.Աշրաֆյան	Ա.Գրիգորյան
Կ. Տ.	Կ. Տ.